ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
2017 թվականի հունիսի 28-ից 30-ը
ք.Մոսկվա /Ռուսաստանի Դաշնություն/
գործուղման արդյունքների մասին

1. Անուն, ազգանուն

Հովհաննես Ազիզյան

2. Զբաղեցրած պաշտոնը

ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարի տեղակալ

3. Գործուղման վայրը և ժամկետները

Գործուղման վայրը՝ ք. Մոսկվա, Ռուսաստանի Դաշնություն:

Գործուղման ժամկետները՝ 2017 թվականի հունիսի 28-ից 30-ը:

4. Հրավիրող կողմը

Եվրասիական տնտեսական հանձնաժողով

5. Գործուղման նպատակը

«Եվրասիական տնտեսական միության և դրա անդամ պետությունների և Վիետնամի Սոցիալիստական Հանրապետության միջև ազատ առևտրի մասին» Համաձայնագրի (այսուհետ՝ Համաձայնագիր) 1.4 հոդվածի դրույթներին համապատասխան ստեղծված Համատեղ Կոմիտեի նիստի, ինչպես նաև Եվրասիական տնտեսական միության ու անդամ պետությունների և Իրանի Իսլամական Հանրապետության միջև ժամանակավոր ազատ առևտրի մասին Համաձայնագրին կից հավելվածներում ներառված ապրանքների մասով սակագնային արտոնությունների տրամադրման և Եվրասիական տնտեսական միության անդամ պետությունների միասնական դիրքորոշման ձևավորման նպատակով կազմակերպվող քննարկումներին մասնակցություն:

6. Քննարկված թեմաները

«Եվրասիական տնտեսական միության և դրա անդամ պետությունների և Վիետնամի Սոցիալիստական Հանրապետության միջև ազատ առևտրի մասին» Համաձայնագրի

կիրառման և գործողության, ինչպես նաև Կողմերի միջև առևտրային հարաբերություններին առնչվող հարցեր, մասնավորապես՝

համաձայնագրի երրորդ հավելվածում ներկայացված տեղեկատվության արդիականացում՝ համաձայն 2017 թվականի հունվարի 1-ից ուժի մեջ մտած ապրանքների նկարագրման և կոդավորման հարմոնիզացված համակարգի,

ծագման երկրի սերտիֆիկատի տրամադրման և հավաստման էլեկտրոնային համակարգի տեխնիկական չափորոշիչների համաձայնեցում, ինչպես նաև նշված համակարգի ներդրման 2017-2018 թվականների միջոցառումների ծրագրի հաստատում,

հայկական ալկոհոլային արտադրանքի՝ վիետնամական շուկա արտոնյալ պայմաններով մուտք գործելու հարցը:

Քննարկվել են նաև Եվրասիական տնտեսական միության անդամ երկրների և Իրանական Իսլամական Հանրապետության կողմից ներկայացված արդյունաբերական ապրանքների ցանկերը, որոնց մասով միասնական դիրքորոշում է ձևավորվել ԵԱՏՄ անդամ պետությունների միջև:

7. Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը

«Եվրասիական տնտեսական միության և դրա անդամ պետությունների և Վիետնամի Սոցիալիստական Հանրապետության միջև ազատ առևտրի մասին» Համաձայնագրի կիրառման և գործողության շուրջ քննարկումներին մասնակցել են Եվրասիական տնտեսական հանձնաժողովի և Եվրասիական տնտեսական միության անդամ պետությունների պատվիրակություններ՝ փոխնախարարների մակարդակով, ինչպես նաև Վիետնամի Սոցիալիստական Հանրապետության պաշտոնյաներ:

Հայկական ալկոհոլային արտադրանքի՝ վիետնամական շուկա արտոնյալ պայմաններով մուտք գործելու հարցի վերաբերյալ վիետնամական կողմի հետ պայմանավորվածություն ձեռք բերվեց, համաձայն որի՝ հայկական կողմը առաջիկայում կներկայացնի լրամշակված առաջարկություն, որի քննարկման արդյունքները կամրագրվեն առանձին արձանագրությամբ:

8. Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը

Ստորագրվեց «Եվրասիական տնտեսական միության և դրա անդամ պետությունների՝ մի կողմից, և Վիետնամի Սոցիալիստական Հանրապետության՝ մյուս կողմից, միջև ազատ առևտրի մասին» Համաձայնագրի 1.4 հոդվածի դրույթներին համապատասխան ստեղծված Համատեղ Կոմիտեի նիստի Արձանագրությունը:

9. Գործուղվողը

ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարի տեղակալ
Հովհաննես Ազիզյան

10. Ստորագրություն, ամսաթիվ

11.07.2017թ.